ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Եկեղեցու միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի հրաւէրով սոյն թուականի Նոյեմբերի 23—28 Ս. Էջմիածին այցելեցին Անկլիքան Եկեղեցու արտաքին յարաբերութիւնների դիւանապետ Հայր Մայքըլ Մուրը և Ա.Մ.Ն.ի Եպիսկոպոսական Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Ռեյմոնդ Օպենհայմը՝ իր տիկնոջ հետ։

Մայր Աթոռի պաշտօնական հիւրերին ընդունեց Նորին Սրբութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Աղդիս Հայրապետը սիրով ընդունելով Նորին Գերազանցութիւն Քենթբըրիի Արքեպիսկոպոսի եղբայրական ողջոյնները՝ փոխադարձ եղբայրական ողջոյնի խօսք յղեց նրան։

Հիւրերը Հայաստանեայց Եկեղեցու միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի ղեկավարների հետ ունեցան պաշտօնական տեսակցութիւն, որի ընթացքում Մայր Աթոռի ներկայացուցիչների եւ յարգարժան հիւրերի միջև տեղի ունեցաւ կարծիքների փոխանակում երկու Եկեղեցիների միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւնների, ինչպէս նաեւ Քենթբրբրիի արքեպիսկոպոսութեան և Անգլիայի Հայոց եկեղեցու փոխադարձ կապերի հետագայ զարգացման հեռանկարների շուրջ։

Մեծարգոյ հիւրերը Հայաստանում գտնուելու օրերին ծանօթացան Հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային կենտրոններին եւ պատմական յուշարձաններին։

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

20 Դեկտեմբեր 1973 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

digitised by A.R.A.R.@